ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

« »_____ 20 թ. N_____

«ՆԱՍ ՋԵՆԵՐԱԼ ԹՐԵՅԴԻՆԳ» ՍՊԸ-Ի

ՏՆՕՐԵՆ ԵՐՎԱՆԴ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Խաչատրյան,

Տեղեկացվում է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մատակարար) միջև 19.10.2017թ. կնքված «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» թիվ ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2-ԳՏՊՏ-54 պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) և Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին 25.12.2017թ. կնքված թիվ ԳՏՊՏ-63 համաձայնագրով Մատակարարը պարտավորվել է մինչև 17.01.2018թ. Պայմանագրով նախատեսված կարգով և վայրում (ք.Երևան, Բագրատունյաց 6 նրբ.) Նախարարությանը մատակարարել Case IH magnum 310 մակնիշի թվով 7 տրակտոր (այսուհետ՝ Ապրանք):

Մատակարարի կողմից թույլ է տրվել Պայմանագրի էական պայմանների խախտում, այն է՝ Ապրանքը Մատակարարի կողմից չի մատակարարվել Պայմանագրով նախատեսված ժամկետում և վայրում: Հաշվի առնելով նշվածը և ղեկավարվելով Պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերությամբ՝ ծանուցում ենք, որ Մատակարարի կողմից Ապրանքը Պայմանագրով սահմանված մատակարարման հասցեով մինչև 15.02.2018թ. ներառյալ չմատակարարվելու դեպքում Պայմանագիրը 16.02.2018թ.-ին համարվում է միակողմանի լուծված:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏԱՇԵՍ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ. (374 11) 52 37 73, ֆաքս. (374 11) 52 46 10
էլ. փոստ agro@minagro.am